ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2009 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2009ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԻՐԱՎԱ-ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՃՅՈՒՂԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
Բուսաբուծություն
Անասնաբուծություն և տոհմային գործ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ

ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ
Արտադրատեխնիկական սպասարկումներ
Գյուղատնտեսության մելիորացիա

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ
Գիտության ոլորտ
Խորհրդատվական ոլորտ
Կրթության ոլորտ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՏԵՍՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
Սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական տեսչականգործունեություն
Բույսերի կարանտինի և երկրագործության պետական տեսչություն
Գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչություն

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. ՀՀ գյուղատնտեսության նախարարության 2009 թվականի գործունեության համար ուղենիշ են ընդունվել ՀՀ կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերկա խնդիրները, ինչպես նաև ՀՀ Նախագահի և վարչապետի օպերատիվ հանձնարարականները:
2. Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով ՀՀ տնտեսությունում ի հայտ եկած դժվարությունների պայմաններում գյուղատնտեսության ոլորտը դրսևորել է հարաբերական կայունություն և 2009 թվականի հունվար-նոյեմբեր ամիսների տվյալներով ապահովվել է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համախառն արտադրանքի 99.8 %-ը: Ընդ որում բուսաբուծության ճյուղում այդ ցուցանիշը կազմել է 100.2 %, իսկ անասնաբուծությունում՝ 99.1 %:
3. ՀՀ կառավարության 2009թ. գործունուեթյան միջոցառումների ծրագրով և գերակա խնդիրներով ՀՀ գյուղատնտեսության նախարարության մասով նախատեսված 10 միջոցառումները սահմանված ժամկետում կատարվել են: Դրանցից 7-ը վերաբերվում է ոլորտի տարբեր բնագավառների իրավա-օրենսդրական կարգավորմանը, իսկ 3-ը կոնկրետ ուղղությունների զարգացման հայեցակարգերին:
4. Վերոհիշյալ միջոցառումների և գերակա խնդիրների իրականացման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է թիվ 1 հավելվածում:

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԻՐԱՎԱ-ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

5. 2009թ.-ին ագրարային ոլորտի իրավա-օրենսդրական հիմքերի բարելավման նպատակով նախարարության նախաձեռնությամբ ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է 2 օրենք, ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել 4 օրենքի և կառավարության 47 որոշման նախագիծ, որից 37-ը ընդունվել է, իսկ մնացածը գտնվում է քննարկման փուլում:
6. ՀՀ գյուղտնտեսության նախարարության կողմից ՀՀ կառավարության գործունեության ծրագրի և «ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության» դրույթներին համապատասխան իրականացրել է ագրարային ոլորտի օպերատիվ կառավարումը, որի շնորհիվ հաշվետու տարում ապահովվել են հետևյալ արդյունքները:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՃՅՈՒՂԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Բուսաբուծություն

7. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով հաշվետու տարում հանրապետությունում կատարվել է 298.1 հազ. հա ցանք, անցած տարվա 304.5 հազ. հա-ի դիմաց (աղյուսակ 1): Սկսած 2006 թվականից յուրաքանչյուր տարի նախորդ տարվա համեմատությամբ ցանքատարածությունները կրճատվել են միջին հաշվով 8.4 հազ. հեկտարով: Այս միտումը կարող է շարունակվել, եթե լուրջ միջոցառումներ չձեռնարկվեն գյուղատնտեսության տեխնիկական հավաքակազմի նորացման և համալրման, պարարտանյութերի օգտագործման ծավալների ավելացման և սպասարկումների սակագների կարգավորման ուղղությամբ:

Աղյուսակ 1

Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունը

(հազ. հա)

Գյուղատնտեսական մշակաբույսերը	2008թ.	2009թ.*	2009թ. 2008թ.-ի նկատմամբ, %
Հացահատիկային և հատիկաընդեղեն մշակաբույսեր	172.8	171.0	98.9
Տեխնիկական մշակաբույսեր	2.4	2.4	100.0
Կարտոֆիլ	34.3	32.0	93.3
Բանջարեղեն	24.2	23.5	97.1
Բոստան	5.4	6.0	111.1
Կերային մշակաբույսեր	65.3	63.2	96.8
Ընդամենը ցանքային տարածությունը	304.5	298.1	97.9
Խաղողի այգի	16.8	17.7	105.4
Պտղատու այգիներ և հատապտուղ	36.7	38.3	104.4
Ընդամենը բազմամյա տնկարկներ	53.5	56.0	107.7

*) օպերատիվ տվյալներով

8.Թեև մի շարք մշակաբույսերի համախառն բերքը նվազել է (հացահատիկ, կարտոֆիլ), բայց ի հաշիվ առավել ինտենսիվ մշակաբույսերի (խաղող, պտուղ) բերքատվության բարձրացման՝ ճյուղում ապահովվել է որոշակի տնտեսական աճ (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի համախառն բերքը 2008 և 2009 թվականներին

(հազ. տոննա)

Գյուղատնտեսական մշակաբույսերը	2008թ.	2009թ. (ՀՀ գյուղատնտեսության նախարարության օպերատիվ տվյալներով	2009թ. 2008թ.-ի նկատմամբ, %
Հացահատիկային և հատիկաընդեղեն մշակաբույսեր	415.4	370.3	89.1
Կարտոֆիլ	648.6	594.0	91.6
Բանջարեղեն	825.3	822.9	99.7
Բոստան	182.2	211.4	116.0
Պտուղ և հատապտուղ	317.8	332.0	104.5
Խաղող	185.8	207.8	111.8

9. Հաշվետու տարում աննախադեպ ծավալների է հասել ծիրանի (շուրջ 13.5 հազ. տոննա), խաղողի (3.5 հազ. տոննա), կեռասի (639 տոննա), դեղձի (993 տոննա) և կարտոֆիլի (6.7 հազ. տոննա) արտահանումը: Նախորդ տարվա համեմատությամբ արտահանման աճը համապատասխանաբար կազմել է՝ 80, 17.9, 177.8, 88.3 և 50.7 տոկոս:

10. «ՀՀ 2007-2011թթ. ցորենի և գարու սերմնաբուծության զարգացման ծրագրի» շրջանակներում 2009թ. արտադրվել է հացահատիկային մշակաբույսերի 179.9 տոննա սուպերէլիտային և 1026.3 տոննա էլիտային սերմ:

11. Ձեռք է բերվել 5720 կգ ցինկի ֆոսֆիդ տեսակի մկնասպան թունանյութ և անհատույց բաշխվել համայնքներին՝ իրենց ուժերով պայքարի աշխատանքներ կազմակերպելու համար: Կենտրոնացված պայքարի աշխատանք է իրականացվել 9.2 հազ. հեկտար տարածության վրա: Բացի դրանից համայնքների միջոցով պայքարի աշխատանքներ է իրականացվել 49.7 հազ. հեկտարի վրա:

12. 2009 թվականին հանրապետության մարզերում մորեխների դեմ պայքարի աշխատանքներ է իրականացվել 4.9 հազ. հա-ի վրա:

13. Հանրապետության անտառներում անտառային վնասատուների և հիվանդու-

թյունների դեմ ավիացիոն քիմիական պայքար է իրականացվել շուրջ 5000 հեկտարի վրա:
14. 2009թ. ընթացքում լաբորատոր հետազոտությունների է ենթարկվել շուրջ 13.8 հազ. տոննա գյուղատնտեսական մշակաբույսերի սերմեր:
15. Փորձաքննության են ենթարկվել գյուղատնտեսական 16 մշակաբույսերի (հացահատիկի բանջարեղենի, կարտոֆիլի, բոստանի, կերային մշակաբույսերի, պտղի և խաղողի) 65 նոր սորտեր և հիբրիդներ:

Անասնաբուծություն և տոհմային գործ

16. Թեև 2009 թվականի հունվարի 1-ի դրությամբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ տավարի գլխաքանակը նվազել էր 44,3 հազար գլխով, կովերինը՝ 27,6 հազար գլխով, ոչխարներինը և այծերինը՝ գրեթե 78,0 հազար գլխով, իսկ խոզերինը՝ 2 հազարով: 2009թ. ընթացքում դադարեց անասնագլխաքանակի նվազման միտումը և 2010թ. հունվարի 1-ի դրությամբ, նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ, տավարի գլխաքանակը նախարարության օպերատիվ տվյալներով կավելանա գրեթե հազար գլխով և կկազմի 585,7 հազար գլուխ, այդ թվում կովերինը 283,3 հազար գլուխ: Խոզերի գլխաքանակը կավելանա 700 գլխով և կկազմի 85,5 հազար գլուխ, իսկ ոչխարների և այծերի գլխաքանակը կկազմի 550,0 հազար գլուխ, ինչը դեռևս շուրջ 10 հազար գլխով պակաս է նախորդ տարվա ցուցանիշից (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը (տարեվերջի դրությամբ)

(հազ. գլուխ)

Գյուղատնտեսական կենդանիներ	2008թ.	2009թ. (ՀՀ գյուղատնտեսության նախարարության օպերա-տիվ տվյալներով)	2009թ. 2008թ-ի նկատմամբ, %
Խոշոր եղջերավոր անասուններ	584.8	585.7	100.1
այդ թվում՝ կովեր	283.1	283.3	100.1
Խոզեր	84.8	85.5	100.8
Ոչխարներ և այծեր	559.2	550.0	98.4

17. Համաձայն օպերատիվ տվյալների, 2009 թ-ին հանրապետությունում արտա-դրվել է 620 հազար տոննա կաթ, 120,2 հազար տոննա միս (կենդանի զանգվածով) և շուրջ 650 մլն ձու (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Անասնաբուծական մթերքների արտադրությունը 2008-2009 թվականներին

	2008թ.	2009թ. (ՀՀ գյուղատնտեսության նախարարության օպերատիվ տվյալներով)	2009թ. 2008թ-ի նկատմամբ, %
Միս (կենդանի քաշով), հազ. տոննա	125.9	120.2	95.5
Կաթ, հազ. տոննա	661.9	628.0	94.9
Ձու, մլն հատ	574.9	648.8	112.9

18. Անասնաբուծության ոլորտում վերջին տարիներին ի հայտ են եկել մի շարք հիմնախնդիրներ՝ բավականին ցածր է կաթի իրացման գինը, որի հետևանքով նվազել է կաթնային տավարաբուծության եկամտաբերությունը: Դեռևս չի լուծվում համակցված կերերի արտադրության և դաշտային կերարտադրության ընդլայնման խնդիրները: Օպերատիվ տվյալներով անբարենպաստ եղանակային պայմանների հետևանքով 2009թ. որոշ չափով պակասել է կուտակված խոտի և ծղոտի

ծավալները (40.0 հազ. տոննա խոտ և 20.0 հազ. տոննա ծղոտ): Գրեթե ամբողջությամբ կրճատվել է խոշոր եղջերավոր անասունների արհեստական սերմնավորման պետական աջակցությունը: Միաժամանակ շարունակվում է Եվրոպական երկրներից հանրապետություն է ներկրվել համաշխարհային ճանաչում ունեցող կաթնատու և կաթնամսատու ուղղության՝ շվից, հոլշտինյան և սիմենթալ ցեղերի տոհմային երինջներ: Այդ նպատակով 2007-2009թթ. ՀՀ կառավարությունը հատկացրել է ավելի քան 1,0 մլրդ դրամ: Ներկրված կենդանիները տարաժամկետ վճարման պայմանով հատկացվել են հանրապետության անասնապահական առաջատար տնտեսություններին, որտեղ կազմակերպվում է դրանց վերարտադրությունը և ստացված սերունդը կմատակարարվի մյուս գյուղացիական տնտեսություններին:

19. 2007-2009թթ. արտերկրից ներկրվել է 1120 գլուխ տոհմային երինջներ, որից 860 գլուխը՝ ՀՀ կառավարության աջակցությամբ և 260 գլուխը՝ ֆերմերային տնտեսությունների ֆինանսական միջոցներով:

20. 2009 թվականը աննախադեպ էր մեր հանրապետությունից ոչխարների արտահանման առումով: Բավականին բարձր գնով Իրանի Իսլամական Հանրապետություն արտահանվեց շուրջ 120.0 հազ. գլուխ ոչխար:Այս փաստը լուրջ խթան է արտահանման ուղղվածություն ունեցող ոչխարաբուծության ճյուղի զարգացման համար: Անհրաժեշտ է իրականացնել նաև բրդի վերամշակման և արտահանման գործուն ծրագրեր, ոչխարների գլխաքանակի ավելացմանը համահունչ բրդի իրացումը կազմակերպելու համար:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ

21. 2009թ. գյուղատնտեսական հումքի գնումների պատշաճ կազմակերպումը եղել է գյուղատնտեսության կարևորագույն խնդիրը և մշտապես գտնվել է ՀՀ Նախագահի, ՀՀ կառավարության և ՀՀ գյուղատնտեսության նախարարի ուշադրության ներքո:

22. Այդ նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում կազմակերպվել են մի շարք քննարկումներ վերամշակող ընկերությունների ղեկավարների և արտահանողների մասնակցությամբ, ինչպես նաև այցելություններ վերամշակող կազմակերպություններ: ՀՀ Նախագահը, ՀՀ վարչապետն ու փոխվարչապետը այցելել և քննարկումներ են անցկացրել Արարատի և Արմավիրի մարզերի վերամշակող կազմակերպություններում և մարզպետարաններում:

23. 2009թ. գյուղհումքի գնումները կազմակերպելու նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվել են նախապատրաստական մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝ վերամշակող ընկերությունների կողմից ակնկալվող գնումների ծավալների ու տեսականու մոնիթորինգ:

24. Իրականացված աշխատանքների ու կազմակերպչական այլ միջոցառումների շնորհիվ, չնայած ճգնաժամի հարուցած դժվարություններին, վերամշակող ընկերությունները պատրաստակամություն ցուցաբերեցին գնելու գյուղացիական տնտեսությունների կողմից առաջարկվող պտղի, բանջարեղենի և խաղողի հումքի ողջ քանակությունը:

25. Ընդհանուր առմամբ մթերվեց ու վերամշակվեց շուրջ 171.3 հազար տոննա պտուղբանջարեղեն և խաղող (շուրջ 17.2 մլրդ. դրամի) (գծապատկեր 1):

26.2009թ. արձանագրվեց խաղողի մթերման միջին գնի նվազում (115.4 դրամ՝ նախորդ տարվա 141.6 դրամի դիմաց), իսկ բանջարեղենի որոշ տեսակների, միջին գները բարձրացել են: Մասնավորապես՝ լոլիկի 1կգ-ի գնման միջին գինը կազմեց 34.5 դրամ, նախորդ տարվա 32.4 դրամի դիմաց:

Վերամշակող ընկերությունների կողմից բուսաբուծական մթերքների գնումների ծավալը



Գծապատկեր 1

27. Պարբերաբար ուսումնասիրվել է խաղողի և պտուղբանջարեղենի մթերումների գործընթացը և օպերատիվ միջամտությամբ կանխվել են այդ ընթացքում ծագած բոլոր խնդիրները, իսկ դրանց ընթացքի մասին նախարարության կողմից պատրաստվել են ամենօրյա օպերատիվ տեղեկանքներ և պարբերաբար տեղեկատվություն է տրամադրվել ՀՀ նախագահի և ՀՀ կառավարության աշխատակազմեր:

28. Հաշվետու տարում Ագրոբիզնեսի զարգացման կենտրոնի հետ համատեղ կազմակերպվել է «Արմպրոդէքսպո-2009» իններորդ միջազգային ցուցահանդեսը, որին, բացի հայրենական արտադրողներից, մասնակցեցին Ավստրիայի, Անգլիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Բելառուսի և Ուկրաինայի ագրովերամշակող կազմակերպություններ:

ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ

29. 2009 թվականի «Գյուղատնտեսական հողօգտագործողներին պետական աջակցություն» ծրագրում ընդգրկել է հանրապետության 7 մարզի 181 համայնք՝ 19.4 հազ. շահառու, 27.6 հազ. հեկտար՝ գարնանացան գարու և ցորենի ցանքերի համար: Պետական աջակցության գումարի չափը գարնանացան հացահատիկային մշակաբույսերի համար կազմել է 967.5 մլն դրամ: Իսկ աշնանացան գարու և ցորենի ցանքերի մասով ծրագրում ընդգրկվել է հանրապետության 7 մարզի 161 համայնք՝ 15.4 հազ. շահառու, 17.4 հազ. հա: Աջակցության գումարը կազմել է 610.2 մլն դրամ:

30. Այսպիսով ընդհանուր առմամբ հացահատիկային մշակաբույսերի համար բարձր լեռնային համայնքներին ցուցաբերվել է 1577.7 մլն դրամի աջակցություն, որի արդյունքում նշված համայնքներում հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունը ավելացել է 14.3 տոկոսով կամ 2.5 հազ. հա: Սա այն դեպքում երբ նույն ժամանակահատվածում հանրապետությունում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունը կրճատվել է 6.4 հազ. հա-ով:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Արտադրատեխնիկական սպասարկումներ

31. 2009թ. նյութատեխնիկական մատակարարումների և արտադրատեխնիկական սպասարկումների բնագավառում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- շարունակվել է Ճապոնիայի կառավարության Զարգացմանն ուղղված Պաշտոնական Օգնություն {ODA} «Դրամաշնորհային աջակցություն սակավապահով ֆերմերներին» ծրագրի իրականացման գործընթացը: Սահմանված կարգով նախապատրաստվել և Ճապոնական կողմին է հանձնվել 2010թ. դրամաշնորհային ծրագիրը շարունակելու համար պահանջվող դիմում-հայտը,
- կազմակերպվել են Ճապոնիայի կառավարության 170 մլն իեն (1.59 մլն ԱՄՆ դոլար) և ՉԺՀ-ի կառավարության 13 մլն յուան (1.62 մլն ԱՄՆ դոլար) ծավալով դրամաշնորհների հաշվին ներկրված գյուղատնտեսական տեխնիկայի ստացման աշխատանքները: Նշված ծրագրերով համապատասխանաբար ներկրվել են 29 տրակտոր և 5 հացահատիկահավաք կոմբայն (ճապոնական) և 50 տրակտոր, 1 հատիկաընդեղենի ու 1 եգիպտացորենի կոմբայն (չինական),
- բանակցություններ են վարվել Ճապոնիայից, Հնդկաստանից, Չինաստանից, Ռուսաստանի Դաշնությունից, ՈՒկրաինայից, Բելոռուսից, Իրանի Իսլամական Հանրապետությունից ապրանքային ներդրումներ ստանալու ուղղությամբ :

Գյուղատնտեսության մելիորացիա

32. Գյուղատնտեսական նշանակության հողերի բարելավման ու պահպանման ուղղությամբ հիմնականում իրականացվել են հետևյալ ծրագրերը.

<u>Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանում, բարելավում եւ ինժեներական կառուցվածքների վերականգնում ծրագիր</u>

33. Իրականացվել է ՀՀ Արմավիրի մարզում Արաքս գետի ափապաշտպան կառուցվածքների վերականգնում, Վեդի գետի հունի մաքրում եւ ափերի ամրացում ՀՀ Արարատի մարզի Եղեգնավան համայնքից Ուրցաձոր համայնքն ընկած հատվածում:

<u>Ճապոնիայի կառավարության «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում ձևավորված գործընկերային հիմնադրամի հաշվին իրականացվող հակահեղեղային միջոցառումներ</u>

34. Կատարվել է Հրազդան գետի հունի մաքրում եւ հողաթմբերի ամրացում, Աղստեւ գետի Դիլիջան քաղաքի հատվածի հունի մաքրման եւ ափերի ամրացման աշխատանքներ, խորքային հորերի հորատում ՀՀ Արարատի մարզի Ոսկետափ, Ավշար, Այգեվան համայնքների տարածքներում:

<u>ՀՀ Նախագահի 2008 թվականի հունվարի 10-ից փետրվարի 17-ը ՀՀ մարզերում եւ համայնքներում նախընտրական հանդիպումների ընթացքում խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ</u>

35. Իրականացվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի տարածքում Մարտունի գետի հունի մաքրում եւ ափապատնեշների կառուցում, ՀՀ Գեղարքունիքի մարզի Վ. Գետաշեն համայնքում խմելու ջրատարի կառուցում:

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Գիտության ոլորտ

36. 2009 թվականին նախարարության համակարգի 7 գիտական կազմակերպություններում կատարվել է պետական բյուջեից ֆինանսավորվող 30 պայմանագրային և 9 բազային ծրագիր:

37.Այդ ծրագրերի շրջանակներում կատարվել է աշնանացան ցորենի 600, աշնանացան գարու 535 սորտանմուշների ցանք: Շրջանացվել են սիսեռի 4 և աշնանացան ցորենի 2 սորտեր:

38. Բանջարաբոստանային հիմնական մշակաբույսերի նոր մրցունակ հիբրիդների և սորտերի ստացման նպատակով հետազոտվել է 735 սորտանմուշ, կատարվել են գենոֆոնդի մեջ ընդգրկված 178 սորտերի սորտաթարմացման աշխատանքներ:

Պետական սորտափորձարկման ներկայացված սորտանմուշներից 25-ը շրջանացվել են:
39. Շարունակվել են աշխատանքները խաղողի և պտղատու մշակաբույսերի սելեկցիայի ու բարձրարժեք սորտերի ստեղծման ուղղությամբ: Մշակվել են խաղողի նոր սելեկցիոն սորտերից աղանդերային գինիների պատրաստման նոր տեխնոլոգիաներ:
40. Շարունակվել են աշխատանքները հողերի ծագման և աշխարհագրության օրինաչափությունների ուսումնասիրության, հողային պաշարների բերրիության ցուցանիշների, հողերի էրոզիոն պրոցեսների, աղակալվածության ռեժիմի պարզաբանման, սննդային ռեժիմի ուսումնասիրությունների և պարարտանյութերի (մակրո-միկրո, բակտերիալ, հանքային և օրգանական) սահմանման, անապատացման դեմ պայքարում հողերի դեգրադացիայի դեմ պայքարի միջոցառումների մշակման ուղղություններով:
41. Աշխատանքներ են տարվել կարտոֆիլի, խաղողի և որոշ դեկորատիվ բույսերի կենսատեխնոլոգիական եղանակով բազմացման, ինչպես նաև գյուղատնտեսական մշակաբույսերի և դրանց վայրի նախնիների գենետիկական բանկի համալրման ուղղությամբ:
42. Աշխատանքներ են իրականացվել անասնաբուծության բնագավառում՝ տավարի կովկասյան գորշ ցեղի հատկանիշների կատարելագործման, հանրապետությունում բուծվող ոչխարների տեղական կոպտաբուրդ ցեղերի վերականգնման, գենոֆոնդի պահպանման և հայկական կիսակոպտաբուրդ ցեղի ոչխարների մթերատու հատկությունների կատարելագործման մեթոդների մշակման, խոզերի հայկական մսային ցեղի բտվողական հատկանիշների բարելավման, ճագարների կերակրման, թռչունների ընտրասերման, բնական կերհանդակների արդյունավետության բարձրացման, կերային մշակաբույսերի սելեկցիայի, ուղղություններով:
43. Հանրապետության նախալեռնային շրջաններում իրականացվել են աշխատանքներ սոյայի և ծխախոտի նոր արժեքավոր և հեռանկարային սորտերի արդյունավետության ուսումնասիրության ուղղությամբ:
44. Ընդհանուր առմամբ 2009թ. գիտական կենտրոնների փորձարարական բազաներում արտադրվել է մոտ 545.7 տոննա աշնանացան ցորեն, այդ թվում՝ 203.0 տոննա սուպեր էլիտա, էլիտա և 1-ին վերարտադրության սերմացու, բանջարաբոստանային մշակաբույսերի 535.0 հազար հատ սածիլ և 85.5 կգ բարձր վերարտադրության սերմացու:

Խորհրդատվական ոլորտ

45. Նախարարության գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ) և Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնի (ԳԱՀԿ) կողմից գյուղացիական տնտեսություններում իրականացվել է «Ագրարային տեխնոլոգիաների գնահատման» 43 ծրագիր: Տեղեկատվության և առաջավոր փորձի տարածման նպատակով տպագրվել են 30 անվանումով շուրջ 20 հազար տպաքանակով խորհրդատվական թերթիկներ, որոնք բաժանվել են ֆերմերային տնտեսություններին:
46. 2009թ. հրատարակվել է «Ագրոլրատու» թերթի 33 համարներ՝ շուրջ 1850 տպաքանակով և «Ագրոգիտություն» ամսագրի 12 համար՝ 520 տպաքանակով: ԳԱՀԿ-ի «Ագրո TV»–ն պատրաստել է 52 հեռուստահաղորդում, որոնք հեռարձակվել են «Կենտրոն», «Համաստիյուռ» հեռուստաալիքներով և մարզային 12 ալիքներով: ԳԱՄԿ-երի կողմից 916 համայնքներում իրականացվել են 2340 սեմինարներ, որին մասնակցել են 44.0 հազ. մարդ: Անցկացվել են 42 ցուցադրություններ, եթեր է հեռարձակվել մոտ 104 հեռուստահաղորդում, տպագրվել են թվով 3400 խորհրդատվական թերթիկներ ու գրքույկներ և թողարկվել է ԳԱՄԿ-երի 140 համար թերթ:

Կրթության ոլորտ

47. 2009-2010 ուսումնական տարում առկա՝ անվճար և վճարովի ուսուցմամբ ՀՀ գյուղատնտեսության նախարարության քոլեջներ են ընդունվել 851 դիմորդ, որից

նախնական մասնագիտական կրթությամբ 110 դիմորդ: Ներկայումս գյուղատնտեսական քոլեջներում սովորում են ընդամենը 3119 ուսանող, որից միջին մասնագիտական կրթությամբ 2836 (առկա և հեռակա ուսուցմամբ): Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությամբ ընդունվել են 283 ուսանողներ, հատկապես տրակտորիստ-մեքենավարների մասնագիտությամբ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

48. Միջազգային համագործակցության բնագավառում իրականացվել են հետևյալ միջոցառումները

49.Ստորագրվել է 3 միջգերատեսչական համաձայնագրեր Ղազախստանի, Հունգարիայի եւ Քուվեյթի գյուղատնտեսության նախարարությունների հետ:

50. Ճապոնիայի կառավարության եւ ՀՀ կառավարության միջեւ փոխանակվել են հայտագրեր «Աջակցություն սակավապահով ֆերմերներին» ծրագրի իրականացման նպատակով:

51. Երևանում անցկացվել են առևտրատնտեսական եւ գիտատեխնիկական հարցերով հայ-սիրիական եւ հայ-ղազախական միջկառավարական հանձնաժողովների նիստեր:

52. ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ներկայացուցիչները, հանրապետության ֆերմերները, ինչպես նաև ագրոպարենային ոլորտի ներկայացուցիչները մասնակցել են արտասահմանյան երկրներում (Գերմանիա, Մեծ բրիտանիա, ԱՄՆ, Հնդկաստան, Եգիպտոս, Չինաստան, Իսրայել, Ճապոնիա, Հունաստան եւ այլն) կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

53. ՀՀ-ում թողարկվող ագրոպարենային ապրանքների նմուշները ներկայացվել են բեռլինի, Քյոլնի գյուղատնտեսական միջազգային ցուցահանդեսներում, ինչպես նաև Աշխաբադում կազմակերպված ԱՊՀ երկրների «Ագրոֆորում» համաժողովի շրջանակներում կազմակերպված ցուցահանդեսում եւ Ուկրաինայի Խարկով քաղաքում կազմակերպված ցուցահանդեսում:

ՏԵՍՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական տեսչություն

54. Կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի համալիր հակահամաճարակային, այդ թվում նաև՝ կենդանիների ու մարդկանց համար ընդհանուր հիվանդությունների և անասնաբուժական կանխարգելիչ ու համալիր միջոցառումների իրականացման համար ձեռք է բերվել կենսապատվաստուկներ (պատվաստանյութ և ախտահանիչ միջոցներ), որոնցով պետպատվերով սահմանված 12 հիվանդությունների նկատմամբ պատվաստվել և ախտորոշվել են թվով 10.37 մլն պայմանական գլուխ կենդանի, այդ թվում թռչուն, մեղվաընտանիք:

55. «Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի փորձաքննության միջոցառումների» ծրագրի իրականացման ուղղությամբ կատարվել է կենդանիների հիվանդությունների 1.582 մլն ախտորոշիչ հետազոտություն, իսկ կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի 1172 փորձաքննություն:

56. Սննդամթերքի անվտանգության և անասնաբուժությանն առնչվող իրավական ակտերով սահմանված պահանջների պահպանմանն ուղղված ստուգումներ են անցկացվել հանրապետության 1157 տնտեսավարող սուբյեկտների մոտ: 2009 թվականին սննդամթերքի լաբորատոր փորձաքննությունների համար կատարվել է 1200 նմուշի փորձաքննություն:

Բույսերի կարանտինի և երկրագործության պետական տեսչություն

57. Բույսերի կարանտինի սահմանային հսկիչ կետերում բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների ներմուծման, արտահանման և վերաարտահանման նպատակով ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվել է 15866 հատ բուսասանիտարական հավաստագիր: Մարզային ստորաբաժանումների կողմից կատարվել են 1470 տեսչական ուսումնասիրություններ, որի

ընթացքում ագրարային կանոնների խախտումների վերաբերյալ կազմվել է 15 արձանագրություն:
58. Տեսչությունը առանձնակի ուշադրություն է հատկացրել հանրապետության տարածքում բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցներ իրացնող սուբյեկտների աշխատանքի վրա, որի նպատակն է եղել հայտնաբերել և արգելել ժամկետանց, անորակ, անվանացանկից դուրս թունաքիմիկատների վաճառքը: Հաշվետու տարում հանրապետություն է ներմուծվել 467.8տ տարբեր տեսակի թունանյութեր, որոնց որակի ստուգման նպատակով կատարվել է նմուշառում և 57 լաբորատոր փորձաքննություն, իսկ թունանյութերի վաճառքով զբաղված խանութներից կատարվել է 600 նմուշառում և լաբորատոր փորձաքննություն:

Գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչություն

59. Հաշվետու ժամանակաշրջանում գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության կողմից պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 45.8 մլն դրամ , այդ թվում՝ պետական տուրք՝ 17.9 և բնապահպանական վճար՝ 27.9 մլն դրամ: Իրականացվել է 7298 միավոր գյուղատնտեսական տեխնիկայի տարեկան զննում, ինչպես նաև տեխնիկայի գրանցման, տրակտորիստ-մեքենավարների վարման իրավունքի տրամադրման և այլ աշխատանքներ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

I. **Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագրով** ըստ հիմնական բաղադրիչների իրականացվել են հետևյալ աշխատանքները.

60. Տրամադրվել է 28 երկարաժամկետ ենթավարկ՝ 876.7 հազ. ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով 3 մասնակից ֆինանսական կառույցների միջոցով (Ինեկոբանկ, Անելիք բանկ, Կոնվերս բանկ):
61. Հանրապետության 9 մարզերում իրականացվել է 18 մրցակցային դրամաշնորհային ծրագիր՝ 295.3 հազ. ԱՄՆ դոլարի արժեքով: Միաժամանակ 2009թ. ընթացքում շարունակվել են նախորդ 3 փուլերի 27 ծրագրեր, որից 25-ը ավարտվում է:
62. Հանրապետության մարզերում ԳԱՄԿ-երի միջոցով իրականացվել են 43 «Ագրարային տեխնոլոգիաների գնահատման» ծրագրեր՝ 74.9 հազ. ԱՄՆ դոլար արժեքով:
63.Աշխատանքներ են տարվել «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի և «Գյումրիի սելեկցիոն կայան» ՊՓԲԸ-ի նյութատեխնիկական բազայի հզորացման ուղղությամբ (գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում՝ 325.0 հազ. ԱՄՆ դոլար, սերմերի որակի ստուգում եւ օժանդակության տրամադրում՝ 128.0 հազ. ԱՄՆ դոլար):
64. 6 մարզերի 32 համայնքներին տրամադրվել է 71 միավոր գյուղատնտեսական տեխնիկա 290.3 մլն դրամ արժեքով, 12 համայնքներում բարելավվել է 31.2 կմ խմելու ջրի ջրագիծ եւ օրվա կարգավորման 5 ջրամբար 209.4 մլն դրամ արժեքով, 2 համայնքում 2.3 կմ ոռոգման համակարգի կառուցում, 82.6 մլն դրամ արժեքով, 12 համայնքում կառուցվել է 43.8 կմ գազատար 253.6 մլն դրամ արժեքով, 5 համայնքում կատարվել են 97.8 մլն դրամի այլ ծրագրեր: Ընդամենը ներդրումները կազմել են 933.7 մլն դրամ:

II. **Շուկայական հնարավորություն ֆերմերներին ծրագրով** ըստ հիմնական բաղադրիչների իրականացվել են հետևյալ աշխատանքները.

65. Տրամադրվել է 2.975 մլն ԱՄՆ դոլարի վարկեր, 12-13 %-ով եւ 3-7 տարի ժամկետով 68 միավոր վարկեր:
66. Հանրապետության մարզերի 91 համայնքներում սկսվել են իրականացվել ենթակառուցվածքների վերականգնման ծրագրերը, այդ թվում՝ 24 համայնքում իրականացվել են ոռոգման ու խմելու ջրի ցանցերի կապիտալ նորոգումներ, խորքային հորերի հորատում, գետերի հուների եւ դրենաժային համակարգերի մաքրում եւ վերականգնում, 66 համայնքում գազաֆիկացման աշխատանքներ, իսկ 1 համայնքում՝ համայնքային ավտոճանապարհի վերանորոգում եւ ասֆալտապա-

տում: 2009թ. ընթացքում կատարվել են 4.254 մլն դրամի աշխատանքներ:
67. 13 համայնքում շարունակվել են նախօրոք սկսված տնտեսապես հիմնավորված ենթակառուցվածքների վերականգնման աշխատանքները, մասնավորապես՝ 9 համայնքում ոռոգման ու խմելու ջրի ցանցերի կապիտալ նորոգումներ եւ ջրարբիացում, իսկ 4 համայնքում գազաֆիկացում: 2009թ. ընթացքում կատարվել են 186.6 մլն դրամի աշխատանքներ:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Անտառային տնտեսության բնագավառում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է հետևյալ աշխատանքները.
68. Նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների լրացում 770 հա տարածքի վրա և հիմնադրվել է տնկարան ու դպրոց-հողամաս 11.5 հա: Բացի այդ տարբեր ծրագրերի հաշվին իրականացվել են անտառապատման աշխատանքներ 436 հա տարածքում:
69. Աշխատանքներ են տարվել անտառկառավարման պլանների մշակման և փորձաքննության ուղղությամբ: 11 անտառտնտեսությունների անտառկառավարման պլաններն անցել են բնապահպանական փորձաքննություն և գտնվում են հաստատման փուլում, 3 անտառտնտեսությունների անտառկառավարման պլանները ներկայացվել են բնապահպանական փորձաքննության, իսկ ևս 4 գտնվում են մշակման փուլում և կավարտվեն 2010 թվականին:
70. Անտառային պահաբաժինների 2009թ. գարնանային և աշնանային ստուգումների արդյունքում հաշվառվել են ապօրինի հատված 1310 ծառերի կոճղեր՝ 711,99 խտ.մ^3 ծավալով, որը զիջում է նախորդ տարվա մակարդակը 51.0 %-ով:
71. 2009թ. հունվարի 1-ից մինչև նոյեմբերի 30-ը «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի կողմից կազմվել են 184 անտառխախտումների արձանագրություններ, որոնցից 151-ը ուղարկվել են մարզերի տարածքային բնապահպանական պետական տեսչություններ, իսկ 33-ը՝ ոստիկանության տարածքային բաժիններ:
72.Հաշվետու տարում շուրջ 4958 հա անտառածածկ տարածքների վրա տերևակեր վնասատուների և հիվանդությունների դեմ իրականացվել են ավիաքիմիական պայքարի աշխատանքներ:

73. Ընդհանուր առմամբ ՀՀ գյուղատնտեսության նախարարության 2009թ. գործունեությունը նպատակաուղղված է եղել ոլորտի գերակա ուղղություններին համապատասխան աշխատանքների իրականացմանը, ընթացիկ հիմնախնդիրների լուծմանը և համակարգում բարեփոխումների խորացմանը:

ԱՌԱՋԻԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

74. Գյուղատնտեսության բնագավառի առաջնահերթ խնդիրներն են.
- ճյուղում ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների մեղմացումը, տնտեսական աճի ապահովումը, գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների ավելացումը,
- առկա հողային, ջրային և աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը,
- գյուղատնտեսական մշակաբույսերի առաջնային սերմնաբուծության զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը,
- տոհմային անասնապահության զարգացման հնարավորությունների ընդլայնումը,
- պարենամթերքի ինքնաբավության մակարդակի բարձրացումը, առաջնահերթ անհրաժեշտ պարենամթերքի ներմուծման փոխարինման նախադրյալների ստեղծումը,
- գյուղտնտեսությունում տնտեսավարողների հասցեական պետական աջակցության մեխանիզմների կատարելագործումը,
- գյուղատնտեսական մթերքների վերամշակող ընկերությունների և հումք

արտադրողների ինտեգրման գործընթացի խթանումը (հատկապես շաքարի ճակնդեղի մշակության վերականգնում),
- գյուղատնտեսական արտադրանքների իրացման ենթակառուցվածքների զարգացումը,
- պետություն-մասնավոր հատված համագործակցությամբ գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների գործընթացի բարելավումն ու մատչելության բարձրացումը, սպասարկումների ու նյութատեխնիկական մատակարարումների համակարգված կազմակերպման նախադրյալների ստեղծումը,
- սննդամթերքի անվտանգության միջազգային չափանիշների ապահովման նպատակով լաբորատոր կարողությունների հզորացումը և սննդամթերքի անվտանգության համակարգի զարգացումը,
- վարկերի մատչելիության բարձրացումը,
- խորհրդատվական համակարգի կարողությունների հզորացումը և ծառայությունների բարելավումը: